



# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2022 թվականի թիվ 93-Ա

ք. Երևան

### «ՇԱՐԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի մայիսի 31-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 17 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող կամ Ընկերություն) «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի խախտման, ինչպես նաև Հեռարձակողի լիցենզիայի պայման հանդիսացող՝ նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ ներկայացված փաստաթղթին համապատասխան չգործելու փաստեր:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի մայիսի 31-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ կազմված արձանագրության՝ 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածի տեսագրության մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ Հեռարձակողի «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի կողմից՝

1. «Հայլուր» լրատվական թողարկումների ժամանակ ընդդիմության ակցիաների, այդ թվում՝ երթերի, ելույթների, հանրահավաքների վերաբերյալ լուսաբանումը կազմել է՝

47%-ից մինչև 91,6 % (օրինակ՝ 25.04.2022թ.-ին կազմել է՝ 47 %, 01.05.2022թ.-ին՝ 74 %, 03.05.2022թ.-ին՝ 91,6 %, 05.05.2022թ.-ին՝ 77 %, 08.05.2022թ.-ին՝ 61 %), որով խախտվել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված իրավական նորմը, այն է՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 %-ը:

2. Լրատվական, հասարակական-քաղաքական և վերլուծական ուղղվածության հաղորդումների ժամանակ չի ապահովվել բազմակողմանի լրատվությունը, ինչպես նաև չի պահպանվել լրատվության անաչառության, անկողմնակալության և բազմակարծության սկզբունքը, դրանով իսկ խախտելով Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան գործելու փաստաթղթում (այսուհետ՝ նաև Հայտ) նշված պարտավորությունները (Օրենքի 46-րդ հոդված 3-րդ մաս, 1-ին կետ), մասնավորապես՝ «Հայլուր» լրատվական թողարկման, «Օրագիր», «Հարցազրույց», «Կարճ ասած» և «Դեմ դիմաց» տեսալսողական հաղորդումների ժամանակ:

Հանձնաժողովը, 2022 թվականի հունիսի 01-ին հարուցված վարչական վարույթի մասին, ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ վերջինս կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Փաստենք նաև, որ Հանձնաժողովն ամփոփելով 2021 թվականին կայացած սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի արդյունքում Հեռարձակողի կողմից ստանձնած լիցենզիայի պայմանները, 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 03-28 գրությամբ ներկայացրել է Հեռարձակողին՝ խմբագրական քաղաքականության թերություններն ու խախտումները: Նշված գրությունից բացի Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 28-ի թիվ 01-208, ապրիլի 29-ի թիվ 01-390 գրություններով (հիմք ընդունելով Հեռարձակողի պատասխանի որոշ դիտարկումներ և Հանձնաժողովի կողմից սույն թվականի ապրիլի 21-ից 27-ն ընկած ժամանակահատվածում մշտադիտարկման արդյունքները) Հեռարձակողը նույնպես զգուշացվել է խախտումների մասին:

Մեջբերում Հանձնաժողովի թիվ 01-208 գրությունից՝

*«(...) Ընկերությունը թերի է կատարում իր մրցութային առաջարկով նախատեսված լրատվական, հասարակական-քաղաքական, վերլուծական հաղորդումների անկողմնակալության, անաչառության, բազմակարծության սկզբունքի պահպանման պարտավորությունը (...): «(...տեղեկատվական, հասարակական-քաղաքական, լրատվական, բնույթի հաղորդումներում հանդիպում ենք մանիպուլյատիվ հնարքների, չստուգված լուրերի և այլն...):»*

Մեջբերում Հանձնաժողովի թիվ 01-390 գրությունից՝

*«(...) 2022 թվականի ապրիլի 21-27-ն ընկած ժամանակահատվածում Հեռարձակողի եթերի մշտադիտարկման արդյունքում վերլուծությունը հիմք է հանդիսանում Հանձնաժողովի այն հիմնավոր կարծիքը, որ «5-րդ ալիք»-ը ոչ միայն չի վերացրել թերություններն ու խախտումներն, այլև շատ ավելի հաճախակի սկսել է կոպտորեն խախտել իր կողմից ստանձնած պարտավորությունները»: «(...քաղաքական բովանդակության ամենամեծ ծավալը հատկացված է շարժման քարոզչական ուղեկցությանը... հաղորդաշարերի հյուրերն ընտրվում են հիմնականում*

*իշխանությունների հանդեպ բացասական (ոչ թե քննադատական) վերաբերմունքի չափորոշիչներով...):*

Գրություններից վկայակոչված մեջբերումներից, կարող ենք փաստել, որ Հանձնաժողովը մի քանի տարբեր գրություններով Ընկերությանը ծանուցել է առկա թերությունների, լիցենզիայի պայմանը չկատարելու, ինչպես նաև զգուշացվել է ծրագրային քաղաքականության այս կերպով շարունակելու արդյունքում Օրենքի դրույթի խախտման վերաբերյալ:

Այժմ անդրադառնալով թիվ 17 վարչական վարույթի շրջանակներին, նշենք, որ սույն վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի հունիսի 08-ին Հանձնաժողով ներկայացված իր պարզաբանումներում մասնավորապես հայտնում է.

*«Չեմ առարկում, որ 2022թ. ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում հնարավոր է արձանագրված լինեն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի որոշ հոդվածների խախտման հատկանիշներ, ավելին, մենք Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի կողմից նամակով զգուշացված էինք և պատասխանել էինք այդ նամակին (տես՝ 02.05.2022 մեր պատասխան նամակը):*

Հեռարձակողը հայտնել է, որ 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում հնարավոր է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի որոշ հոդվածների խախտման հատկանիշներ, որ արձանագրության մեջ գրած դիտողությունների որոշ մասի հետ համաձայն են և կփորձեն շտկել: Մնացածն «անշտկելի է, և այն պետք է շտկել այլ հաստատություններում»:

Պարզաբանման մեջ բերվել են նաև ըստ Հեռարձակողի՝ մշտադիտարկման արձանագրությունում սխալ ձևակերպված փաստերի և տվյալների սխալ արձանագրումներ, որոնց մանրամասն կանդրադառնանք ստորև.

***Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.***

1. Ըստ 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքների՝ «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի «Հայլուր» լրատվական թողարկումների ժամանակ ընդդիմության ակցիաների, այդ թվում՝ երթերի, ելույթների, հանրահավաքների վերաբերյալ լուսաբանումը կազմել է՝ 47 %-ից մինչև 91,6% (օրինակ՝ 25.04.2022թ.-ին կազմել է՝ 47 %, 01.05.2022թ.-ին՝ 74 %, 03.05.2022թ.-ին՝ 91,6 %, 05.05.2022թ.-ին՝ 77 %, 08.05.2022թ.-ին՝ 61 %): Խախտվել է Օրենքով սահմանված հետևյալ նորմը՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 %-ը (Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մաս):

2. Ըստ 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածի մշտադիտարկման արդյունքների՝ «5-րդ ալիք» տեսալսողական ծրագրի լրատվական և հասարակական-քաղաքական և վերլուծական ուղղվածության տեսալսողական հաղորդումներում (մասնավորապես՝ «Հայլուր» լրատվական թողարկման, «Օրագիր», «Հարցազրույց», «Կարճ ասած» և «Դեմ դիմաց» տեսալսողական հաղորդումների ժամանակ) Հեռարձակողը չի պահպանել լրատվության անաչառության, անկողմնակալության և բազմակարծության սկզբունքները, դրանով իսկ խախտելով

Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան գործելու պարտավորությունները (Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ),

***Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) Հեռարձակողի կողմից իրավախախտում կատարված լինելու առաջին հարցի կապակցությամբ.***

Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է՝

«Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը»:

Սակայն, համաձայն մշտադիտարկման արդյունքների՝ Հեռարձակողի կողմից «Հայլուր» լրատվական հաղորդման ընթացքում

25.04.2022թ.-ին նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը կազմել է՝ 47 %,

01.05.2022թ.-ին՝ 74 %,

03.05.2022թ.-ին՝ 91,6 %,

05.05.2022թ.-ին՝ 77 %,

08.05.2022թ.-ին՝ 61 %:

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Օրենսդիրը հստակ, ամրագրված լեզվով նպատակներին հասնելու համար, սահմանել է որոշակի սահմանափակում (նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը), ավելին՝ Օրենքում նման դրույթի նախատեսման նպատակն է հետաքրքրող բոլոր այն խնդիրների լուսաբանումը, որտեղ բարձր է հանրային հետաքրքրվածությունը և դա ոչ միայն քաղաքական, այլ նաև սոցիալական, մշակութային, սպորտային կամ տնտեսական հետաքրքրություն ներկայացնող նոր, դեռ ոչ ոքի հայտնի չդարձած, թարմ նյութերի ապահովումն է լրատվական հաղորդումներում:

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում և ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիները որոշումներ կայացնելիս հիմնվում են ստացված տեղեկատվության հիման վրա: Միայն իրազեկ քաղաքացին է ազատ հասարակության հիմքը և քաղաքացիների կողմից անկողմնակալ, ստուգված և հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը զանգվածային լրատվության միջոցների համար, այդ թվում Հեռարձակողի համար ենթադրում է նաև որոշակի պատասխանատվություն:

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **զանգվածային լրատվություն (այսուհետ՝ լրատվություն)**՝ անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու և տարածելու տեղեկություններ ու գաղափարներ:

Լրատվությունն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցի տարածմամբ:

Այսպիսով, զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության տարածման պարտականություն: Զանգվածային լրատվության միջոցների այդ գործառույթին (պարտականությանը) զուգորդվում է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը: Փաստենք նաև, որ Հանձնաժողովը հիմք ընդունելով Օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասը՝ 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 80-Ս որոշմամբ հաստատված Հավելվածով սահմանել է թեմատիկ տեսալսողական հաղորդումների չափորոշիչները և դրանց հասկացությունները, ինչպես նաև որպես պետական կարգավորող մարմին նպատակ ունենալով աջակցել լիցենզավորված հեռարձակողներին՝ **տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն ըստ բովանդակային առանձնահատկությունների տարբերելու և տարակարծություններից խուսափելու համար:** Նշված որոշմամբ հաստատված Հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով տրվել է նաև «լրատվական թողարկման» սահմանումը:

Այժմ անդրադառնանք Հեռարձակողի կողմից վարչական վարույթի պարզաբանման ընթացքում ներկայացված դիրքորոշումներին և ներկայացնենք Հանձնաժողովի պարզաբանումները՝

*-«Սակայն հարկ եմ համարում ևս մեկ անգամ հիշեցնել, որ երբ երկրում էքստրեմալ վիճակ է, և դեպքերը ժամ առ ժամ են զարգանում, որպես լրատվամիջոց պարտավոր ես աշխատել հատուկ ձևաչափով: Մենք նման կերպով աշխատել ենք և՛ ՔՈՎԻԴ-19 համավարակի, և՛ հատկապես 44-օրյա պատերազմի օրերին և ոչ մի դիտողություն Հանձնաժողովի կողմից չենք ստացել:*

*Հարց է առաջանում, ինչու՞ մի դեպքում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթների պահանջները կարելի է անտեսել, որն, ի դեպ, ճիշտ և անհրաժեշտ մոտեցում է, իսկ մեկ այլ դեպքում՝ անցանկալի: Կարող եմ պնդել, որ նույնը եղել է ՔՈՎԻԴ 19 համաճարակի ժամանակ, երբ թողարկումների ընթացքում համաճարակի մասին պատմող նյութերի տոկոսը գերիշխող էր նույնիսկ անգեն աչքով»:*

Այո, թե՛ համավարակի, և թե՛ պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում թե՛ մասնավոր կառույցները, և թե՛ հատկապես պետական կառույցներն աշխատել են հատուկ ձևաչափով: Այս ամենի արդյունքում Հանձնաժողովին իր լիազորությունների իրականացման տարբերակման մեջ փորձել մեղադրելը, իհարկե, ճիշտ չէ:

Հայաստանի Հանրապետությունում արտակարգ և ռազմական դրություններն իրավական ռեժիմներ են, որոնք սահմանվում են համապատասխանաբար՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» և «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքներով: Ստացվում է, որ վկայակոչված օրենքներն արդեն իսկ նախատեսում են յուրաքանչյուրի գործողությունները, վարքագծի կանոնները՝ համապատասխան իրավական ռեժիմի առկայության պարագայում: Եվ Հեռարձակողի արձագանքում ամրագրված պնդումը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ մի կողմից արտակարգ և ռազմական դրության իրավական

ռեժիմները, և մյուս կողմից ներքաղաքական գործընթացները նույնականացվում են, որի արդյունքում էլ արդարացվում է Օրենքով նախատեսված դրույթի խախտման փաստը:

Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության իրավական ռեժիմն ուժի մեջ է մտել 2020 թվականի մարտի 16-ին, իսկ ռազմական դրությունը՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, որն ուժը կորցրել է՝ 2021 թվականի մարտի 26-ին: Վկայակոչված իրավական ռեժիմներն առանձին-առանձին նախատեսել էին ՋԼՄ-ների գործունեության կարգը, ինչպես նաև ամրագրել են որոշակի սահմանափակումներ, որոնք համաչափ և իրավաչափ էին նշյալ իրավական ռեժիմների կիրարկման համատեքստում: Հաշվի առնելով նշյալ իրավական ռեժիմների առանձնահատկությունները, ողջամիտ ենք համարել, ինչպես նաև ողջամիտ ենք համարում՝ իրավական ռեժիմների գործարկման ընթացքում որևէ թեմատիկ ուղղվածությանն Օրենքի պահանջով 25-% և ավել անդրադառնալը: Սակայն, այն պարագայում, երբ Հայաստանում չկա որևէ դրության իրավական ռեժիմ, ապա Հեռարձակողի կողմից նույնացնելը երկու իրար հակառակ համամետական իրավիճակներ՝ իրավաչափ չէ, քանի որ ունենք հստակ տարբերվող իրավիճակներ. մի կողմից որևէ դրության իրավական ռեժիմ, և մյուս կողմից ներքաղաքական գործընթացներ (անկախ նրանից, թե քաղաքական իշխանություն կրող սուբյեկտներից, որ ճամբարն է հեղինակը):

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝

1. Հեռարձակողները պարտավոր են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող պաշտոնյային հատկացնել եթերաժամանակ՝ պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար:

2. Հեռարձակողների կողմից եթերաժամանակի հատկացման կարգը և պայմանները սահմանում է կարգավորող պետական մարմինը (սահմանվել է **Հանձնաժողովի օգոստոսի 28-ի թիվ 81-Ա որոշմամբ**):

3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Հեռարձակողների տեղեկատվության սահմանափակումները կիրառվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով սահմանված շրջանակներում:

Եվ ավելին, ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հեռարձակողների կողմից եթերաժամանակ չհատկացվելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառել **Հեռարձակողի լիցենզիայի գործողության կասեցում վարչական տույժը (Օրենքի 58-րդ հոդված, 1-ին մաս, 8-րդ կետ)**:

Եվ նշենք ևս մեկ փաստ՝ ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 02-ի թիվ 1137-Ն որոշման համաձայն՝ նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու նպատակով հանրային իրազեկման աշխատանքներ իրականացրած Հայաստանի հանրային մուլտիպլեքսում հեռարձակող հեռուստաընկերություններին և FM հաճախականությունների տիրույթում հեռարձակող լիցենզավորված ռադիոընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով տրամադրվել է 78,300.0 հազ. դրամ:

Անդրադառնանք Հեռարձակողի կողմից բերված ևս մեկ արտահայտված դիրքորոշմանը.

- «Մեկ այլ մեջբերման մասին. «... հանրային նշանակություն ունեցող իրադարձություններ, կապված երկրի սոցիալ տնտեսական խնդիրների հետ, ընդհանրապես չեն լուսաբանվում լրատվական հաղորդումներում կամ ներկայացվում են հեզնական եղանակով» չի համապատասխանում իրականությանը: Նման խնդիրները քննարկվում են թռուցկաժողովների ժամանակ, և անհրաժեշտ թեմաները լուսաբանվում են, իսկ այն թեմաները, որոնք ներկայացվում են «աննախադեպ» հաջողությունների շարքից, բայց մանիպուլյատիվ են կամ սուտ, բնականաբար, փորձում ենք ներկայացնել ընդդիմախոսի փորձագիտական կարծիքով, վերլուծությամբ, միջազգային գործընկերների հրապարակած տվյալներով, ինչն, ըստ իս, մշտադիտարկողն ընկալել է աղավաղված տեսանկյունից: Ինչու՞. ես այս հարցի պատասխանը չունեմ. ըստ երևույթին, քաղաքական կողմնորոշման կամ քիմքի հարց է, որը հաճախ նմանվում է խմբագրական միջամտության փորձի»:

Իսկ որոնք են ըստ Հեռարձակողի լուսաբանման ենթակա «անհրաժեշտ թեմաները»: Կրկին անդրադառնանք Հանձնաժողովի որոշմամբ սահմանված լրատվական թողարկման հասկացությանը՝ տեսալսողական տեղեկատվություն պարունակող, սպառողի համար քաղաքական, սոցիալական, մշակութային կամ տնտեսական հետաքրքրություն ներկայացնող նոր, դեռ ոչ ոքի հայտնի չդարձած, թարմ նյութ, այսինքն՝ տեղեկություններ այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենում այս պահին, կամ պահպանել են իրենց արդիականությունը և ազդեցությունը գործընթացների, իրավիճակների վրա:

Ըստ Հեռարձակողի ստացվում է, սույն թվականի ապրիլի 25-ին (նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը կազմել է՝ 47 %), մայիսի 01-ին ( 74 %), մայիսի 03-ն (91,6 %), մայիսի 05-ին (77 %) և մայիսի 08-ին (61 %) լուսաբանման ենթակա տեղական կամ միջազգային այլ իրադարձություններ կամ նորություններ տեղի չեն ունեցել, այսինքն լուսաբանման ենթակա «անհրաժեշտ թեմաներ» չեն եղել՝:

Որպես օրինակ դիտարկենք 2022 թվականի մայիսի 3-ի (նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը կազմել է՝ 91,6 %) իրադարձություններից մի քանիսը, որոնք չեն լուսաբանվել «5-րդ ալիք» ծրագրի լրատվական թողարկումներում՝

- Աշխատանքային այցով Հայաստան էր այցելել Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունը Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Ժիլբեր-Լյուկ Դըվինազի գլխավորությամբ: Մայիսի 3-ին պատվիրակությունը հանդիպել է ՀՀ վարչապետի և ԱԺ նախագահի հետ: Հանդիպմանը անդրադարձ է կատարվել դեռևս Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիների, պատանդների և պահվող այլ քաղաքացիական անձանց վերադարձի ապահովմանը, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակին, հումանիտար խնդիրներին, Արցախի ադրբեջանական վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգության պահպանման խնդիրներին: Ֆրանսիական կողմը վերահաստատել է այդ հարցերում իր գործուն աջակցությունը: Ֆրանսիայի Սենատի պատվիրակությունը այցելել է Ծիծեռնակաբերդ և Ցեղասպանության թանգարանի ինստիտուտ.

- Պաշտպանության նախարարն ընդունել է ԱՄՆ Կանգաս նահանգի Ազգային գվարդիայի պատվիրակությանը՝ Ազգային գվարդիայի հրամանատար Դեյվիդ Վեյլերի

գլխավորությամբ: Անդրադառալով Հայաստան-Կանգաս ռազմական համագործակցությանը՝ կողմերը ընդգծել են, որ իրականացվում են արդյունավետ միջոցառումներ խաղաղասպառնության, ռազմակրթական, ռազմաբժշկական և այլ ոլորտներում: Զրուցակիցները քննարկել են նաև տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

• Արցախի նախագահն ու Հայաստանի ամերիկյան համալսարանի պատվիրակությունը քննարկել են կրթության զարգացմանը վերաբերող հարցեր:

• ՀՀ գլխավոր դատախազը Ազգային ժողովին ներկայացրել է Դատախազության 2021 թվականի գործունեության մասին հաղորդումը:

• Մամուլի ազատության համաշխարհային ինդեքսում Հայաստանը բարելավել է դիրքերը:

• Հայաստան եմ եկել հայ-ճապոնական հարաբերությունները ամրապնդելու նպատակով. Ճապոնիայի ԱԳ փոխնախարար: Ճապոնիայի ԱԳ փոխնախարարն այցելել է նաև Ղուկասավանի ՏՏ մասնագիտական կենտրոն: Բարձրաստիճան դիվանագետը խոստացել է ճապոնական կողմի աջակցությունը ՏՏ ոլորտի հայ ուսանողներին .

• Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում քննարկվել են ՀՀ ճանապարհները՝ որպես տարանցիկ ուղի օգտագործելու և Ուզբեկստանը Եվրոպային կապելու հնարավորությունները:

• Ազգային ժողովում քննարկվել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի ընտրության հարցը:

Այսպիսով, ի մի բերելով մեկ օրվա իրադարձությունները, Հանձնաժողովը ևս մեկ անգամ ամրագրում է, որ նշված օրվա իրադարձություններից միայն 8,4%-ն է լուսաբանվել և Հանձնաժողովն ընդամենն Օրենքի ուժով պահանջում է լրատվական հաղորդումների ընթացքում ներկայացվեն տարբեր թեմաներ, որոնք անհրաժեշտ է առաջին հերթին Ընկերության շահառուներին:

***2) Հեռարձակողի կողմից իրավախախտում կատարված լինելու երկրորդ հարցի կապակցությամբ.***

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտին կցվում է փաստաթուղթ՝ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որը հանդիսանում է լիցենզիայի պայման: Ըստ նշված փաստաթղթի՝ հեռարձակողի «5-րդ ալիք» ծրագիրն ապահովելու է լրատվական, հասարակական-քաղաքական և վերլուծական ուղղվածության հաղորդումներում բազմակարծության սկզբունքի, բազմակողմանի լրատվության ապահովումը և առաջնորդվելու է լրատվության անաչառության, բազմակարծության և անկողմնակալության ապահովման գերակա սկզբունքով:



Հեռարձակողի կողմից Հեռարձակողի լիցենզիայի պայման հանդիսացող՝ նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ ներկայացված փաստաթղթին համապատասխան չգործելու փաստերին Հեռարձակողի «5-րդ ալիք» ծրագրի 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման և արդյունքների համադրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը չի կատարում իր կողմից ստանձնած՝ լրատվական և քաղաքական-վերլուծական ուղղվածության հաղորդումների մասով, պարտավորությունները:

Ստորև ներկայացնենք Ընկերության լրատվական և քաղաքական-վերլուծական ուղղվածության հաղորդումներում ըստ Հայտի ստանձնած պարտավորությունների, Հանձնաժողովի կողմից արձանագրված փաստերի և Հեռարձակողի պարզաբանման դրույթները (ըստ առանձին տեսալսողական հաղորդումների).

**«Հայլուր» լրատվական թողարկում**

**Ըստ Հայտի՝**

- «Հայլուր». Հավատարիմ մնալով լրատվության բազմակարծության սկզբունքի ապահովմանը, ինչպես նաև իրազեկ քաղաքացի ունենալու գերակա սկզբունքին՝ պրոֆեսիոնալներից և գործի գիտակներից կազմված «Հայլուր» լրատվականի ստեղծագործական թիմն **անում է անհնարինը՝** օբյեկտիվ և իրականությանը համապատասխանող դինամիկ լրատվություն ապահովելու համար.

- «5-րդ ալիք»-ը հավատարիմ է մնացել որդեգրած ռազմավարությանը և առաջնորդվում է լրատվության անաչառության, բազմակարծության և անկողմնակալության ապահովման գերակա սկզբունքով.

- «Հայլուր» լրատվական ծառայությունը աշխատում է այդ սկզբունքով՝ պահպանելով անաչառությունը, ստույգությունը և բազմակարծությունը: Նշենք նաև, որ հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային, տարածաշրջանային ու միջազգային ամենահրատապ և ակտուալ հարցերը «Հայլուր»-ի տաղավարում վերլուծում են տվյալ ոլորտի փորձագետները.

Ըստ Հանձնաժողովի արձանագրության՝ Հեռարձակողը թեև նշում է, որ «Հայլուր» լրատվական ծառայությունը աշխատում է այդ սկզբունքով՝ պահպանելով անաչառությունը, ստույգությունը և բազմակարծությունը», «...ստեղծագործական թիմն անում է անհնարինը՝ օբյեկտիվ և իրականությանը համապատասխանող դինամիկ լրատվություն ապահովելու համար», սակայն, փաստացի, «Հայլուր» լրատվական հաղորդումը հաճախ փաստերը հստակորեն չի սահմանազատում կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից, բավականին միակողմանի, կողմնակալ, հիմնականում բացասական լույսի ներքո, ինչպես նաև մանիպուլյատիվ է ներկայացնում նորությունները:

Բազմաթիվ օրինակներից վկայակոչենք միայն 2022 թվականի մայիսի 3-ի «Հայլուր»-ի թողարկումից՝

2022 թվականի մայիսի 3-ի «Հայլուր»-ի թողարկման տեսանյութում հաղորդավարուհին նշում է, որ «... Իշխան Սաղաթեյանի խմբին առաջինը միանում են Երևանի թատրոնի և կինոյի պետական համալսարանի ուսանողները...»: Հաղորդավարուհու խոսքից տպավորություն է ստեղծվում, թե բոլոր ուսանողները կամ շատ ուսանողներ են միացել, սակայն տեսանյութում երևում է, որ Երևանի թատրոնի և կինոյի պետական համալսարանի շենքից դուրս են գալիս

ընդամենը 4-5 հոգի: Տեսանյութի շարունակության մեջ թեև ասվում է՝ «...Հյուսիսային համալսարանի ուսանողները պատուհաններից են ողջունում, համալսարանի դռները, ըստ որոշ տեղեկությունների, փակել են ներսից...», սակայն տեսանյութում երևում է 10-15 անձ, որոնցից միայն մեկն է ձեռքով ողջունում, իսկ մեկ այլ անձ, հակառակը, միջնամատ է ցույց տալիս, մյուսները չեզոք են:

2022 թվականի մայիսի 3-ի «Հայլուր»-ի թողարկման ընթացքում Ազգային ժողովի հերթական քառօրյա նիստին անդրադարձել է հետևյալ կերպ՝ «...Խորհրդարանական երկիր Հայաստանի Ազգային ժողովում այսօր սկսվել է հերթական քառօրյան առանց ընդդիմության: ՔՊ-ականներն էլ ամբողջ կազմով չեն հավաքվել՝ 71 ՔՊ-ականից նիստին ներկա է եղել 64-ը, բոլորն էլ նախընտրել են լռել փողոցները ողողած ակցիաների մասին, քննարկել են «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու հարցը»:

Սակայն, երբ ուսումնասիրում ենք Ազգային ժողովի կայքը, ապա թեպետ հաղորդավարուհին նշում է, որ «քննարկել են «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու հարցը», դրանով իսկ տպավորություն ստեղծելով, որ քննարկվել է մեկ՝ ոչ այդքան կարևոր օրենքի նախագիծ: Սակայն, Ազգային ժողովի նիստում այդ օրը նշված օրենքից զատ քննարկվել են մի քանի օրենքների նախագծեր, օրինակ՝ «Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը և մի շարք այլ հարցեր:

Ըստ Հեռարձակողի պարզաբանման՝

*Մշտադիտարկման արձանագրությունում «Հայլուր» լրատվականին վերաբերող ձևակերպումը, այն է՝ «... հաճախ փաստերը հստակորեն չի սահմանազատում կարծիքներից, վերլուծությունից և մեկնաբանություններից, բավականին միակողմանի, կողմնակալ, հիմնականում բացասական լույսի ներքո, ինչպես նաև մանիպուլյատիվ է ներկայացնում նորությունները» խիստ ընդհանրական բնույթի դատողություններ են, որ կարող ենք անել յուրաքանչյուր լրատվամիջոցի մասին:*

«Օրագիր» տեսալսողական հաղորդման

Ըստ Հայտի՝

- Ներկայացնելով տպագիր և էլեկտրոնային մամուլի օրվա ուշագրավ անդրադարձերը՝ «Օրագիր»-ը հարթակ է տրամադրում նաև գործընկեր զանգվածային լրատվամիջոցներին՝ ներկայացնելու սեփական տեսակետը երկրում և դրա սահմաններից դուրս տեղի ունեցող գործընթացների և իրադարձությունների մասին: Այս ձևաչափը ազատ խոսքը կարևորող

*հեռուստադիտողին հիանալի հնարավորություն է ընձեռում մեկ աղբյուրից տեղեկանալ տարբեր դիտանկյուններից ներկայացված օրվա լրահոսին»:*

Ըստ Հանձնաժողովի արձանագրության

Հեռարձակողը թեև նշել է, որ՝ ներկայացնելով տպագիր և էլեկտրոնային մամուլի օրվա ուշագրավ անդրադարձերը՝ «Օրագիր»-ը հարթակ է տրամադրում նաև գործընկեր զանգվածային լրատվամիջոցներին՝ ներկայացնելու սեփական տեսակետը երկրում և դրա սահմաններից դուրս տեղի ունեցող գործընթացների և իրադարձությունների մասին: Այս ձևաչափը ազատ խոսքը կարևորող հեռուստադիտողին հիանալի հնարավորություն է ընձեռում մեկ աղբյուրից տեղեկանալ տարբեր դիտանկյուններից ներկայացված օրվա լրահոսին, սակայն պատկերը բոլորովին այլ է: 2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում «Օրագիր» հաղորդման հյուրերն են եղել՝ Արթուր Խաչատրյանը, Հովհաննես Հարությունյանը, Խաչիկ Մանուկյանը, Կարեն Քոչարյանը, Ռոբերտ Հայրապետյանը, Կարեն Վրթանեսյանը, Արսեն Ջուլֆալակյանը, Էլինար Վարդանյանը, Հայկ Խալաթյանը: «Օրագիր» հաղորդման վերոնշյալ թողարկումների բոլոր հյուրերը ունեն ընդդիմադիր հայացքներ: Հյուրերը հիմնականում խոսել են՝ վիրավորական բնույթի արտահայտություններով, միակողմանի ու չփաստարկված տեղեկատվություն տրամադրել, ինչպես նաև իրենց խոսքում բազմիցս շեշտել են իշխանափոխության անհրաժեշտությունը: Նշված հաղորդման բազմակարծությունը՝ իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու անհնարինության դեպքում, հնարավոր էր ապահովել թեկուզև հաղորդման ընթացքում ներկայացվող տարբեր տեսակետներ և դիրքորոշումներ պարունակող տպագիր և էլեկտրոնային մամուլում տեղ գտած որոշ հրապարակումների միջոցով, հաշվի առնելով նաև, որ՝ ըստ Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների, դրանք հիանալի հնարավորություն պետք է ընձեռեին մեկ աղբյուրից տեղեկանալ տարբեր դիտանկյուններից ներկայացված օրվա լրահոսին, սակայն ընթերցվող հրապարակումների գեռակշրող մասը ևս կրում է հակաիշխանական բնույթ:

Բազմաթիվ օրինակներից վկայակոչենք միայն 2022 թվականի մայիսի 3-ի «Օրագիր» տեսալսողական հաղորդումից՝

2022 թվականի մայիսի 3-ի «Օրագիր» հաղորդման ժամանակ հաղորդավարուհին ասում է՝ երկրորդ օրն է ընդդիմությունը և հասարակությունը, որոնք միացել են այս շարժմանը, գիշերում են Ֆրանսիայի հրապարակում, այսօրվանից շարունակվել են մասշտաբային անհնազանդության շարժումները, տարբեր ակցիաներ են տեղի ունենում տարբեր հատվածներում: «Երևանի արդեն 15-ից 20 ուղղությամբ փաստորեն երթեր են եղել այսօր, - հայտնել է Իշխան Սաղաթեյանը՝ ընդդիմության առաջնորդներից, նա նշել է, որ այդ պահի դրությամբ՝ ժամը 10:30-ի դրությամբ, 200 հոգու արդեն ոստիկանները բերման են ենթարկել, և նա նշել է, որ Նիկոլ Փաշինյանը չի կարող հրաժարական չտալ, որովհետև իշխանությունը արդեն փողոցում է»: Ես խնդրում եմ դուք անդրադառնաք այս վերջին երկու օրերին ոստիկանական գործողություններին: Մենք տեսնում ենք բիրտ ուժի կիրառում, մենք տեսնում ենք այդ բերման ենթարկելու սահմանված կանոնների խախտում և ուղիղ նաև անցում, հա, լիազորություններից, հատկապես կարմիր բերետավորների և սև համազգեստով ոստիկանական խմբերի կողմից: Հաղորդավարուհին շարունակում է՝ ... և այս ուժը, պարոն Հայրապետյան, հակառակ էֆեկտն է ունենում, որովհետև այն չի վախեցնում երիտասարդներին, ակտիվիստներին, որոնք դուրս են եկել փողոց: Հակառակը՝ ավելի շատ

գեներացնում է իրավիճակը, որ ավելի շատ մարդ մասնակցի: Այսինքն՝ կարող ենք արդեն արձանագրել, վերջին երկու օրերի իրադարձությունները նկատի ունենալով, որ ուժով հնարավոր չի, փաստորեն, կանգնեցնել ժողովրդական շարժումը, ոստիկանությունը որքան էլ բերման է ենթարկում մարդկանց կամ ֆիզիկական ուժ է գործադրում, դա չի կանխում, հա, հետագա ակցիաները: Հյուրը պատասխանում է՝ «այս ամենի թշվառությունը կայանում է նրանում, որ մեր քաղաքացիները բերման են ենթարկվում, քաղաքացիները ծեծի են ենթարկվում այն բանի համար, որ փորձում են իրենց երկրում տեր կանգնել իրենց հայրենիքին և փորձում են իրենց երկրում պաշտպանվել թուրքից»: Հաղորդավարուհին շարունակում է՝ «և այն բանի համար, այստեղ պիտի արձանագրենք, ինչը արվում էր չորս տարի առաջ գործող իշխանության կողմից, այսինքն՝ նույն բանն էին անում՝ ճանապարհ էին փակում, անհնազանդության զանգվածային ակցիաներ էին անում և, դատելով իշխանականների արձագանքից, տպավորություն է, որ այն ժամանակ իրենց կարելի էր, հիմա ոչ ոքի ոչինչ չի կարելի, որովհետև իշխանական պատգամավորները, իշխանական տարբեր շրջանակներ երեկ ուղղակի գովերգում էին ոստիկանության գործողությունները, նույնիսկ էսպես ձևակերպումներ կար՝ «Կյանքեր ջան, ինչ լավ էք գործում», հա, ըրը վարչապետի»: Հյուրը՝ «դա Նիկոլ Փաշինյանի տխրահույսակ նախկին օգնականի ձևակերպումն էր. . .

#### Ըստ Հեռարձակողի պարզաբանման՝

*«Օրագիր» հաղորդման բոլոր հյուրերն ունեն ընդհանրապես, երբեմն ծայրահեղ ընդհանրապես հայացքներ»: Նույն երգն է՝ տարբեր գործիքավորմամբ: Բազմիցս ասել եմ, տեղեկացրել, որ ՔՊ կուսակցությունն ունի քաղաքական որոշում՝ որևէ ձևաչափով չմասնակցելու «5-րդ ալիք» հաղորդումներին: Մնացած բոլոր կողմերի ներկայացուցիչները, ում հրավիրում ենք, արտահայտում են ՔՊ-ին հակառակ տեսակետներ: «Դեմ դիմաց» հաղորդման Ձեր նշած հյուրերի՝ Ավետիք Իշխանյանի և Վարդան Հարությունյանի օրինակը խնդրում եմ դիտել վերը նշվածի համատեքստում: Թվում է, թե Վարդան Հարությունյանը, որը հաճախ հանդես է գալիս իշխանությունների պաշտպանության դիրքերից, պետք է բանավիճեր, արդարացներ, հակադարձեր ընդհանրապես, սակայն ստացվեց հակառակը: Հաճախ այդ հաղորդմանը հակառակ կողմից հյուրի մասնակցության հրավերը մերժելու պատճառով բանավեճը մեր կամքից անկախ վերածվում է քննարկման:*

*Ընդունում եմ այն առաջարկը, որ մամուլի տեսության մեջ օգտագործենք նաև իշխանությանը սատարող մամուլի միջոցների հրապարակումներ, բայց, ցավոք, դրանք շատ չեն, իսկ եղածներն էլ «սունկ կայքեր» են, որոնց հղում անելը մասնագիտական դեգրադացիայի կհանգեցնի: Այնուամենայնիվ, առաջիկայում անպայման հաշվի կառնենք Ձեր առաջարկը և անպայման վարչապետի ընտանիքին պատկանող «Հայկական Ժամանակ» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերից մեջբերումներ կլինեն:*

#### «Հարցազրույց» տեսալսողական հաղորդման

##### Ըստ Հայտի՝

*«Հարցազրույց» հաղորդման ձևաչափում բարձրաձայնում, քննարկում և վերլուծում են տեղական, տարածաշրջանային և միջազգային քաղաքական կարևորագույն գործընթացները, դրանց առկա և հնարավոր հետևանքները, երկրի առջև ծառայած ներքին և արտաքին մարտահրավերները և փորձում է գտնել դրանք հաղթահարելու հնարավոր ուղիները*

##### Ըստ Հանձնաժողովի արձանագրության՝

«Հարցազրույց» հաղորդման հյուրերն են եղել՝ Արտակ Չաքարյանը, Մարտին Հուրիխանյանը, Գագիկ Համբարձումյանը, Արթուր Ղազինյանը, Արա Սահակյանը, Մաթիկ Մեյրանյանը, Ռուբեն Մելքոնյանը, Ալեն Ղևոնդյանը, Աստղիկ Ավետիսյանը: Ըստ էության, հաղորդմանը հրավիրվում են հյուրեր, որոնք տարածաշրջանային և քաղաքական գործընթացները քննարկում և վերլուծում են միակողմանի՝ շեշտադրելով իշխանության քայլերի թերությունները ու պախարակելով գործելաճը: Հարցազրույցի ընթացքում հնչում է անհարգալից խոսք թե գործող իշխանության, թե այն քաղաքական ուժերի, անհատների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասին, որոնք չեն կիսում ընդդիմության տեսակետները:

Բազմաթիվ օրինակներից վկայակոչենք միայն 2022 թվականի ապրիլի 26-ի «Հարցազրույց» տեսալսողական հաղորդումից՝

26.04.2022թ. Հյուր՝ Մարտին Հուրիխանյան

Հաղորդավար՝ Ընդդիմությունը ակտիվ բողոքի գործողություններ է սկսել, ոստիկանությունը, ուժային կառույցները բավականաչափ մեծ ուժեր են ներդրել ընդդիմության այդ բողոքի գործողությունները կասեցնելու ուղղությամբ, ինչը տարօրինակ է հա՞, եթե հիշենք 2018թ. անհամեմատելի է հա, այն ուժերը, որոնք կենտրոնացած էին Նիկոլ Փաշինյանի դեմ, և հիմա, որ Նիկոլ Փաշինյանը կենտրոնացնում է այս ընդդիմության դեմ: Տեսնում ենք ոստիկանների թվի ավելացում, ուժայինների աշխատավարձերի, պարզապահարների ավելացում, բայց երկրի իրավիճակը հանցագործությունների աճի առումով անմխիթար է: Անընդհատ ինչ–որ կրակոցներ, սպանություններ, ինքնասպանություններ, թալան և այլն: Տպավորություն է, որ ոստիկանությունը և ուժային կառույցները իշխանության և կոնկրետ Նիկոլ Փաշինյանի անվտանգությունն ապահովող ինչ–որ գորակազմ է: Ճի՞շտ տպավորություն է:

Հյուր՝ Շատ կուզենայի ասել, ժխտել Ձեր ասածը, իսկապես կուզենայի ժխտել, որովհետև ոստիկանություն է, բանակ է, ԱԱԾ է, իրավապահ մեկ այլ մարմին է թե ինչ է, այս ամենը կոչված են երկրի պետականության ամրապնդման համար, սրանք կոչված են հասարակության բարօրությանը ծառայելու համար: Ցավոք սրտի, բառիս բուն իմաստով, առևտրի է վերածվել ամեն ինչ, գնում են ու գնվում է ամեն ինչ, բայց խնդիրն այն է, որ ուշ թե շուտ այս ամենը չոքելու է նաև այդ կամավոր ինքնագոհողությունների գնացող, հանուն իշխանության ինքնագոհողությունների գնացող նաև մարդկանց համբերության բաժակն է սպառվում: Ի վերջո, աշխատավարձ բարձրացնելով, եթե ես այսօր ապրում էի, օրինակի համար, 100 000 դրամով և իմ աշխատավարձը դարձել է 300 000 դրամ, վաղը այդ 300 000–ը ինձ 100 000–ից պակասի էֆեկտ է թողնելու:

Հաղորդավար՝ Ի՞նչ առումով:

Հյուր՝ Շատ պարզ առումներով, ես վարժվելու եմ 300 000 դրամի շրջանակներում իմ կենսակերպի, իմ ընտանիքի օրվա խնդիրը լուծելու բանով, և այդ ինչքան շատ գումար, էնքան ավելի շատ գումարի պահանջ: Արձագանքը լինելու է էտ հաստատ անխուսափելի է, այդ 300 000–ը նույն քչությունն է անելու 100 000–ն էր անում երեկ, այդ վաղը մյուս օրը դառնալիք 500.000 նույն քչությունն է անելու, ինչը որ 100 000–ը:

Հաղորդավար՝ Դե ի՞նչ խնդիր, պետական պարտք կվերցնեն և կուղղեն դատախազների, ոստիկանների, չզիտեմ մյուս ուժայինների աշխատավարձերի և պարզապահարների

ուղղությամբ: Պետական պարտքը կավելանա, իշխանությունը իրեն ավելի պաշտպանված կզգա:

Ըստ Հեռարձակողի պարզաբանման՝

Իսկ, որ «Հարցազրույց»-ի վարողի կողմից է հնչում հեզնական անհարգալից խոսք. . .» սա արդեն նոր մեղադրանք է: Մշտադիտարկողին խորհուրդ կտամ կարդալ, ուսումնասիրել «հարցազրույցի ժանրը», որպեսզի կարողանա մտքերն այնպես ձևակերպել, որ դրանք վիրավորական որակումներ չունենան, կամ ուղղակի թող նայի Հանրային հեռուստաընկերության հարցազրույցները, համեմատի, որպեսզի թացը չորի հետ չխառնվի:

«Կարճ ասած» տեսալսողական հաղորդման

Ըստ Հայտի՝

- «5-րդ ալիք»-ը հավատարիմ է մնացել որդեգրած ռազմավարությանը և առաջնորդվում է լրատվության անաչառության, բազմակարծության և անկողմնակալության ապահովման գերակա սկզբունքով:

Ըստ Հանձնաժողովի արձանագրության՝

«Կարճ ասած» հաղորդման ընթացքում, որի հաղորդավար Սևակ Հակոբյանը վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հաճախ չի հիմնվում ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա, շատ անգամ սեփական կարծիքը ներկայացնում է իբրև փաստ, ինչպես նաև՝ իրական փաստերը և եղելությունները ներկայացվում է միակողմանի և տեղեկատվության ընթացքում ներկայացվում են տվյալներ, որոնք կոնտեքստից կտրված են, հնչում է կողմնակալ, անարգանք և վիրավորանք պարունակող, անհանդուրժողականություն և ատելություն սերմանող խոսք:

Բազմաթիվ օրինակներից վկայակոչենք միայն 2022 թվականի մայիսի 06-ի «Կարճ ասած» տեսալսողական հաղորդումից՝

**06.05.2022թ.**

... Այս օրերին նաև շատ նկատելի է, թե որքան քիչ է մարդկանց թիվը, որոնք Նիկոլ Փաշինյանին են սատարում. այդ մարդիկ բոլորը միասին մի փոքր հրապարակ չեն լցնի:

Փողոցում պայքարողների թիվը մեծանում է իշխանության գործողությունների պատճառով: Այսօր, օրինակ, լուր հրապարակվեց, թե Տավուշի մարզում մերոնք սկսել են արագ տեմպերով երկրորդ ու երրորդ գիծ խրամատներ փորել: Լուրեր են պտտվում, որ Տավուշից տարածքներ են հանձնելու, այդ թվում՝ Վրաստան տանող մայրուղուց հատված: Այս ամենը մեծացնում է փողոցը:

Շատերը փողոց դուրս են գալիս այն պատճառով, որ Նիկոլ Փաշինյանի մասին մի շարք միջեր էին հորինել, որոնք այս 4 տարում անխնա փշրվեցին, ու տակը մնաց մի հաստ մեծ դատարկություն: Միջերից մեկն այն էր, թե Նիկոլն արդար է: Այդ միջը փշրվեց այն ժամանակ, երբ Նիկոլը հայտարարեց՝ կա՞ եղպիսի մի դատավոր, որ իմ ասածը չանի:

Ասում էին Նիկոլը իր խոսքի տերն է, խոստացավ որ այլևս ոչ մի պաշտոնի չի նշանակի ԽՕԲ համակարգով, բայց շատ-շատերին այդ կոռուպցիոն ձևով նշանակեց: Ասում էին՝ Նիկոլը անկաշառ է. որքա՞ն օդում կախված լուրեր կան, նաև կոնկրետ հայտարարություն, թե խմբագիր եղած ժամանակ Նիկոլին ինչպես են փող տվել, որ նյութ գրի կամ չգրի մարդկանց վրա:

Միֆերից մեկն այն էր, թե Նիկոլը ժողովրդի պես աղքատ է, ժողովրդի ծոցից են դուրս եկել. էս միֆը փշրվեց թեկուզ Սուրեն Պապիկյանի բաազմամիլիոնանոց հարսանիքի ժամանակ, պաշտոնյաների՝ հսկայական պարզևավճարների ժամանակ:

Ատամները չսարքելով աղքատ ձևանալու տեխնոլոգիան այլևս չի աշխատում:

Պաշտպանության արդեն նախկին նախարար Դավիթ Տոնոյանը երեկ հաստատել է, ասել է՝ պատերազմի չորրորդ օրը ԳՇ պետը ասել է, որ անհրաժեշտ է 2-3 օրվա ընթացքում պատերազմը կանգնեցնել: Կարող էր կանգնեցնել, ու այսքան գոհ չէր լինի:

**Իսկ կարո՞ղ էք ասել ում աջակցությունն է վայելում իշխանությունը.** սիրված մտավորականները չեն սատարում, մասնագիտական բոլոր շրջանակները հրաժարական են պահանջում դեռ նոյեմբերի 9-ից, հոգևոր դասը չի սատարում, գործարարները չեն սատարում: Անգամ ՔՊ-ական դեպուտատների մի մասը, ըստ օդում կախված լուրերի, մնացել է Փաշինյանի կողքին կոմպրոմատների արդյունքում:

Ըստ Հեռարձակողի պարզաբանման՝

*«Կարճ ասած» հաղորդումը, անշուշտ, «5-րդ ալիքի» լավագույն հաղորդումը չէ, այն հրապարակախոսական ժանրի հաղորդում է: Ինքս՝ որպես տնօրեն, խնդիր ունեմ այդ հաղորդման հետ: Բայց ազնիվ լինելու համար չեն կարող ասել, որ դա միակ հաղորդումն է, որը տեղ է գտել «Ադմասֆեր Արմենիա» չափումների լավագույն տասնյակում:*

«Դեմ դիմաց» տեսալսողական հաղորդում

Ըստ Հայտի՝

*բանավեճի ձևաչափում քաղաքական–վերլուծական հաղորդում է, որի ընթացքում տարբեր քաղաքական ճամբարներ ներկայացնող կողմերը կառուցողական բանավեճի միջոցով փորձում են գնահատական տալ այս կամ այն գործընթացներին, վերլուծել դրանք՝ պահպանելով հեռուստաթերի և էթիկայի կանոնները, նորմերն ու չափորոշիչները:*

Ըստ Հանձնաժողովի արձանագրության՝

Մշտադիտարկման ժամանակահատվածում «Դեմ դիմաց» հաղորդումը հեռարձակվել է մեկ անգամ: Հաղորդման հյուրերն են եղել՝ իրավապաշտպաններ՝ Ավետիք Իշխանյանը և Վարդան Հարությունյանը, ովքեր խոսել, մեկնաբանել, վերլուծել ու իրենց կարծիքն են հայտնել մի շարք թեմաների հետ կապված՝ այդ թվում՝ կառավարական շարասյան մեքենայի կողմից վրաերթի ենթարկված կնոջ մահվան դեպքի, Նիկոլ Փաշինյանի ելույթներում արված արտահայտությունների, ոստիկանության գործելառճի, ընդդիմության բողոքի ակցիաների, պատերազմի և խաղաղության մասին և այլն: Հյուրերը քննարկել և իրենց տեսակետներն են հայտնել բարձրացված հարցերի շուրջ, սակայն նրանց կարծիքները չեն հակասել իրար, ինչպես ենթադրում է բանավեճի ձևաչափն, այլ հակառակը՝ լրացրել են միմյանց:

Անդրադառնանք նաև Արձանագրությամբ ամրագրված հետևյալ դրույթին.

«2022 թվականի ապրիլի 25-ից մինչև մայիսի 8-ը ընկած ժամանակահատվածում «5-րդ ալիք»-ի քաղաքական բովանդակության ամենամեծ ծավալը հատկացված է եղել փողոցային ակցիաների լուսաբանմանը, բացի վերոգրյալից՝ ընդդիմության ակցիաներն օրվա ընթացքում

լուսաբանվել են նաև պարբերաբար ուղիղ միացմամբ, որոնց հեռարձակումը շարունակվում է անգամ մանկական հաղորդումների հեռարձակմանը զուգահեռ՝ Էկրանի անկյունում ցուցադրելու միջոցով (օրինակ՝ 02.05.2022թ. ժամը՝ 13:11–ին «Շահրազադ. Չպատմված պատմություններ» մուլտֆիլմի, ժամը՝ 13:58–ին «Հոպլա շոու» մանկական հաղորդման ժամանակ):

Հեռարձակողը ի պատասխան այս դիտարկմանը նշել է.

*«02.05.2022թ. ժամը 13:11-ին մուլտֆիլմի ընթացքում և նույն օրը՝ 13:58-ին, «Հոպլա շոուի» ժամանակ զուգահեռ՝ Էկրանի անկյունում, եթերի ցուցադրումը եղել է զուտ տեխնիկական թերություն թողարկիչ ռեժիսորի կողմից, որը շտկվել է հաջորդ օրերին՝ չնայած, որ օրենսդրությամբ արգելված չէ հաղորդման ընթացքում նման հեռարձակումը: Հարցը բարոյական տիրույթում է և այն շտկվել է առանց որևէ մեկի խորհրդի կամ միջամտության»:*

Սակայն, հարկ է արձանագրել, որ նույն՝ զուգահեռ հեռարձակումը, եղել է նաև 2022 թվականի մայիսի 2-ին ժամը՝ 09:21-09:43 մուլտֆիլմի ողջ ընթացքում և այլ օրերին մանկական հաղորդումների հեռարձակման ժամանակ և **այստեղ այս խախտումը որակավորել որպես զուտ տեխնիկական թերություն թողարկիչ ռեժիսորի կողմից** (ինչպես նշել է Հեռարձակողը), իրականությանը չի համապատասխանում: Բերենք փաստեր Էկրանի անկյունում ցուցադրելու միջոցով հետևյալ մանկական տեսալսողական հաղորդումների ընթացքում ցուցադրվել են փողոցային ակցիաները, մասնավորապես՝

#### **28. 04. 2022թ.**

- ժամը՝ 13:12-13:58 հեռարձակված «Շահրազադ. Չպատմված պատմություններ» մուլտֆիլմի՝ 13:47–13:58 ընկած ժամանակահատվածում.
- ժամը՝ 14:00-14:14 հեռարձակված «Հոպլա Շոու» մանկական հաղորդման՝ 14:00–14:01 ընկած ժամանակահատվածում:

#### **29. 04. 2022թ.**

- ժամը՝ 13:15-14:02–ին հեռարձակված «Շահրազադ. Չպատմված պատմություններ» մուլտֆիլմի՝ 13:40-14:02 ընկած ժամանակահատվածում:

#### **02.05.2022թ.**

- ժամը՝ 09:21-09:43 «Մումիտրոլների հովիտը» մուլտֆիլմի ողջ ընթացքում:

#### **05.05.2022թ.**

- ժամը՝ 09:09-09:12 հեռարձակված «Շահրազադ. Չպատմված պատմություններ» մուլտֆիլմին զուգահեռ Էկրանի անկյունում ուղիղ միացմամբ ցուցադրվել են անհնազադության ակցիաները Երևանում և մուլտֆիլմը երկու անգամ ընդհատվել է նույն ուղիղ միացմամբ:

Հեռարձակողն այս հարցի վերաբերյալ հայտնում է նաև, որ այն բարոյական տիրույթում է, սակայն ամրագրենք, որ այն ոչ միայն բարոյական տիրույթում է, յուրաքանչյուր երեխայի իրավունքները և շահերը ավելի վեր պետք է լինեն, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը և լրատվամիջոցներում այն օգտագործելու անհրաժեշտությունը: Ուստի յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում: Նրանց շահերը, անվտանգությունը պետք է գերակա լինեն խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ: Անհրաժեշտ է մշակել և գործարկել ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի



տեղեկատվական հոսքերի պայմաններում այնպիսի մեխանիզմներ, երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին գերծ պահելու համար (քանի որ Հեռարձակողի «ուղիղ եթեր»-ի ընթացքում կարող էին կատարվել անվերահսկելի իրադարձություններ):

### Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

*«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն»:*

*9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:*

Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է՝ Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

Իսկ Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում է՝

«Սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտին կցվում են՝

- 1) փաստաթուղթ Հեռարձակողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայմաններ.»:՝

Իսկ նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է՝

«Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթում հաղթողի ընտրությունն իրականացվում է կարգավորող պետական մարմնի անդամների վարկանիշային փակ քվեարկության միջոցով»:

Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 94-Ն որոշման՝ հավելված 1-ով սահմանվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը:

Օրենքի և Մրցութային կարգի վերոնշյալ կարգավորումներից բխում է, որ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա տրամադրելու գործընթացում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև որոշում կայացնելն ուսումնասիրել և համադրել է ներկայացված հայտերը և կից փաստաթղթերը, առանձին դիրքորոշում է արտահայտել կոնկրետ սուբյեկտին լիցենզիա տրամադրելու վերաբերյալ, կախված Օրենքով նախատեսված կոնկրետ չափանիշներից: Եվ այս ամենի արդյունքում, համաձայն Մրցութային կարգի 34-րդ կետի կարգավորման՝ լիցենզիան տրամադրվել է այն անձանց, որոնք ստացել են առավելագույն վարկանիշային միավորը:

Այսպիսով, հիմք ընդունելով Օրենքով և Մրցութային կարգով սահմանված չափորոշիչները, Հանձնաժողովը որոշում է ընդունել Հեռարձակողին՝ ճանաչել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող և տրամադրել Երևան քաղաքի տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա, իսկ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ ստուգում է հեռարձակողի կողմից սլոթի օգտագործման լիցենզավորման հայտին կցված լիցենզիայի պայմանների համապատասխանությունը:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված հետևյալ սահմանափակումը՝ **Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:** Հարկ ենք համարում նաև նշել, որ նույնիսկ տևական ժամանակ ընթացող հանրահավաքները, բողոքի երթերն ու նստացույցերը ժողովրդավարական պետության քաղաքական համակարգի բաղկացուցիչ մաս են համարվում: Քաղաքագիտության մեջ «քաղաքական ճգնաժամ» հասկացությունն ունի իր հստակ սահմանումը, և 2022թ. ապրիլ-հունիս ամիսներին ընդդիմության կողմից իրականացվող փողոցային ակցիաները հնարավոր չի որակել, որպես «քաղաքական ճգնաժամ»:

Միաժամանակ, հանդիսանալով լիցենզավորված **Հեռարձակող, վերջինս պարտավոր է կատարել իր իսկ կողմից ստանձնած լիցենզիայի պայմանները**, քանի որ այդ պայմաններն են հիմք հանդիսացել նաև մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և Երևան քաղաքի տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա տրամադրելու համար:

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության տարածման պարտականությունը, մասնավորապես Հեռարձակողն իր լրատվական թողարկման մեջ կենտրոնանալով մեկ իրադարձության լուսաբանման վրա, այլ տեղեկատվության տարածմանը շատ քիչ

Եթերաժամանակ է տրամադրել (եթե տրամադրել է): Ինչպես նաև իր լրատվական, հասարակական-քաղաքական և վերլուծական ուղղվածության հաղորդումների ժամանակ չի գործել նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ ներկայացված փաստաթղթին համապատասխան, չի ապահովել բազմակողմանի լրատվությունը, ինչպես նաև չի պահպանվել լրատվության անաչառության, անկողմնակալության և բազմակարծության սկզբունքը, Հեռարձակողի կողմից տեսալսողական հաղորդումներում չի իրականացվել նաև փաստի և կարծիքի տարանջատում:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Իսկ Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Օրենքի 57-րդ հոդվածի 29-րդ մասը սահմանում է.

«29. Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան չգործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի և 2-րդ կետերով, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք

ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 57-րդ հոդվածի 29-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը հաղորդման եթերաժամի 25 տոկոսը գերազանցելու պահանջը խախտելու համար:
2. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 29-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում, այն «ՇԱՐԿ» ՍՊ ընկերությանը, պատշաճ ձևով, հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

30 հունիսի 2022թ.

ք. Երևան